կեան նստում բակում, ծառերի տակ, փոքրիկ աւազանի մօտ:

Բակի անկիւնում, բարի մի վանդակի մօտ, ճերմակ, երկայն պոչերով աղաւնիներ են ման գալիս: Նրանք ման են գալիս տատանուելով եւ կտուցում են խոր մի լռութիւն:

Ռոման սիւների ետեւ ծաղիկներ են չարուած: Մանիօլինայի հսկայ մի ծառ՝ ծանրօրէն բանտարկուած ու երկնքի պայծառ մի կըտոր ընկած վերի յարկի պատուհանների վրայ:

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել:

Ահա գեղեցիկ գարուն քո եկել...

Իսկ հայոց աշխարհում հիմա ձմեռ է:

Մշոյ դաշտի գիւղացին իր փափախի վրայից թոռի է տալիս առաջին ձիւնը: Վանքի արեւելեան խուցերից մէկում, փոքրիկ սեղանի առջեւ, նստած է երեւի երիտասարդ մի վարդապետ, գիր ու գիրքը առջեւ, բայց միտքը հեռուն, վաղուց լքած հայրենի երկրում:

Կովը փակել են գոմում: Խնձորենու մերկ ճիւղերը սարսուում են: Բակը ճերմակ է: Ձիւնի վրայ քայլեր են մնացել եւ այնտեղ, ուր ոտքը ծանր է քայլել, կազմուել է ցեխ եւ ջուր: Իսկ աքլորը յիմարօրէն կանչում է: Լեռները խիստ են, մեծդի եւ բարձրաբերձ: Մամը դուրս է եկել, հաւերին կուտ է տանում: Գլուխը ծածկել է մեծ մի չալով, բերանի վրայ կապոց դրել եւ որովհետեւ ուզում է արագ քայլել՝ տանիքից մի քիչ ձիւն է թափում:

Վարդապետի նայուածքը կէս մութ խուցում սեւ մոմեր է վառում եւ սիրտը հեծկլըտում է ու երգում:

Ցուրտ-ցուրտ ձմռունք
Բրդան յարմակ հովերէն,
Սպիտակ կարուանք
Իջան լեռանց կողերէն.
Փչեցին պինդ քամիներն,
Հա՜, փչեցին,
Ստռով ձիւնով զարն ու զմոր զուգեցին,
Վարդն քափուր վատեցաւ,
Ծիծղուն ծաղիկ ծածկեցաւ,
Եւ Հայաստան սուգ մտաւ...

Այնտեղ...

Սուրբ Ղազարի շուրջը մելամաղձոտ աշուն է փայլում: Պատերի վրայ գունատ թէյվարդեր են կախուել: Ծաղիկները թառամում են եւ մանիօլայի տերեւները լաց են լինում փոքրիկ աւազանի վրայ:

Աշունը պատուհաններից ներս է մտնում՝ անձայն բոժոժներ կախած ուրուական՝ կանգ է առնում խուցերում, գլուխը սեղմում կրծքերի վրայ եւ սազի երկու թելի վրայ դնդնդում:

Վարդապետները չոյում են իրենց մօրուքը եւ յառում մերկ պատին:

Իսկ ինքը Ալիշանը՝ պզտիկ, նիհարուկ այդ ծերունին՝ դուրս է գալիս իր գերեզմանից եւ անհանգիստ ոգու նման թափառում է:

Նախ այդպէս.—

Առաւօտեան ժամը 5-ին, ադամամութին, երբ Լիդօի վրայ դեռ թանձր մշուշ է պառկած եւ Ադրիականը մոնչում է կէս խաւարի մէջ. երբ Լագունայի սիւների վրայ դեռ արցունքոտ լոյսեր են կախուած եւ կամպանիլլէի փչրուած հրեշտակը ուստղ է փնտռում կաթնագոյն ամպերի ետեւ. երբ պասեճալի պահապանը աչքերը ճմռում է եւ նայում ժամացոյցին. երբ Սան Նիկոլօյի մօտ Հնդկաստանից եկած մըսկոտ անգլիական մի նաւ սպասում է լուսաբացին, որպէսզի կարողանայ նաւամատոյց մըտնել՝ Սուրբ Ղազարում հնչում է զանգակը, խուցերը բացւում են եւ վարդապետները, բարակ փիյոններ գցած իրենց ուսերին, քունով լեցուն աչքերով, դանդաղ եւ խստադէմ, շարքով իջնում են եկեղեցի, մի մի մոմ են վառում եւ չոքում են նստարանների վրայ:

Մինչ մութի մէջ վարդապետները չարականներ են երգում, եւ մեծ զանգը զօղանջում է երեք անգամ, ամպերի հետ հաղորդակցութեան մտնելու համար՝ Հայր Ղեւոնդ Ալիշանը, խոնարհաբար ձեռքերը կրծքին սեղմած, ոսկրուտ ծնկերը դեռնին, աղօթում է դուռն առջեւ եւ երկրպագում:

Կէս ժամ յետոյ, ճիշդ այն ժամանակ, երբ անգլիական հաստափոր նաւը ճեղքում է ջրանցքը եւ արեւելքում արեւը կարմիր տօն է կատարում, Ալիշանը, արագ եւ աննշմարելի քայլերով հեռանում է դուռն մօտից, դուրս է գալիս պարտէզ եւ ֆոսֆորէ աչքերով նայում է աջ եւ նայում է ձախ, ծանր լռութեան մէջ իր ճամբան փնտռելու համար:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան